CELL TECHNOLOGIES
REGENERATIVE MEDICINE
INTELLIGENT DATA SCIENCE
SYNTHETIC BIOLOGY
POSTGENOME
RESEARCH & DEVELOPMENT

YEREVAN ARMENIA 2025

CONGRESS CRISPR-2025

October 5 -10, 2025

Հարգելի գործընկերներ,

Սիրով տեղեկացնում ենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 5-ից 10-ը Երևանում կանցկացվի «CRISPR-2025» երրորդ միջազգային համաժողովը:

Այս միջոցառման կենտրոնում են գենոմի խմբագրման արագ զարգացող տեխնոլոգիաները, հատկապես՝ CRISPR/Cas համակարգերը, որոնք մոլեկուլային կենսաբանության և բժշկության ամենահզոր գործիքներից են: Համաժողովի ընթացքում քննարկվելու են բջջային տեխնոլոգիաների, վերականգնողական բժշկության, կենսաբժշկական տվյալների խելացի վերլուծության և հետգենոմային հետազոտությունների առաջատար մոտեցումները: Ծրագրում նախատեսված են պլենար, բանավոր և պաստառային զեկուցումներ, ինչպես նաև պանելային քննարկումներ:

Հրավիրված բանախոսների թվում են գենոմիկայի, գենոմի խմբագրման հիմնարար և տրանսլյացիոն հետազոտությունների առաջատար գիտնականներ և մասնագետներ ԱՄՆ-ից, Եվրոպայից, Չինաստանից, Ռուսաստանից և Հայաստանից:

Համաժողովին կարող են մասնակցել գիտաշխատողներ, բժիշկներ, կենսաբժշկական ուղղության ինդուստրիայի մասնագետներ, ասպիրանտներ, ռեզիդենտներ և ուսանողներ:
Աշխատանքային լեզուներն են անգլերենը և ռուսերենը:
Մասնակցության համար անհրաժեշտ է նախապես գրանցվել համաժողովի կայքում մինչև սեպտեմբերի 5-ը:
Թեզիսների ընդունման վերջնաժամկետը՝ հունիսի 30:
Մանրամասների համար կարող եք այցելել համաժողովի կայքը՝ https://crispr2025.rau.am/en/
Ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը:

Համաժողովի կազմակերպիչներն են Հայ-Ռուսական համալսարանը, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, ՌԴ ԳԱ Սիբիրյան բաժանմունքի Բջջաբանության և գենետիկայի ինստիտուտը, Քիմիական կենսաբանության և հիմնարար բժշկության ինստիտուտը և Սուրգուտի պետական համալսարանը:

“CRISPR-2025” համաժողովի
կազմկոմիտեի համանախագահ
կ.գ.դ. Արսեն Առաքելյան